

ՀԱՅԵՐԵՆԻՑ ԱՆՂԼԵՐԵՆ ԼԵԶՎԱՆՑՈՒՄՆԵՐՆ ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՅ ՀԱՆՐԱՊԵՏԹՈՒՄ

Ինչպես հայտնի է, լեզվանցումները, բացի իրենց զուտ լեզվական առանձնահատկություններից, կատարում են նաև համընդհանրական գործառույթ և շատ հաճախ՝ «հանդես են գալիս որպես հանրալեզվաբանական գործիք» (Սքիբա, 1997, էջ 2): Ամերիկացի լեզվաբան Միլլոյը նշում է. «... երկու լեզուներին տիրապետող հաղորդակցվողները տարբեր կողերին (լեզուներին) վերագրում են տարբեր հասարակական արժեքներ, կամ տարբեր ունկնդիրների հետ հաղորդակցվողը առավել նպատակահարմար է համարում այս կամ այն լեզվի կիրառությունը (Միլլոյ, 1987, էջ 185): Այս առումով, հետաքրքիր էր դիտարկել հայերենից անգլերեն լեզվանցումները նաև ամերիկացի հայկական հանրություններում: Վերջիններս կարելի է համարել երկլեզվանի համայնքներ, քանզի թե՛ անգլերենը, թե՛ հայերենը գործածվում են գրեթե նույն հաճախականությամբ: Ուստի լեզվանցումները հայերենից անգլերեն կարող են ունենալ այլ դրդապատճառներ և նպատակներ, քան թե երբ դրանք տեղի են ունենում Հայաստանում, որտեղ անգլերենը հանդես է գալիս որպես օտար լեզու և տարբեր խոսքային իրավիճակներում կարող է տարբեր գործառույթներ կատարել: «Քանի որ յուրաքանչյուր լեզվահանրույթ ունի իր սեփական նորմերը, լեզվաիրավիճակային յուրահատկությունները տարբեր հանրությունում տարբեր ձևով են գնահատվում և մեկնաբանվում»- գրում է ամերիկացի հանրալեզվաբան Քերոլ Սքաթոնը (Սքաթոն, 1987, 64):

Անգլիացի լեզվաբան Դեվիդ Քրիսթալը առանձնացնում է լեզվանցումների երեք դեպք.

- ա) երբ հաղորդակցվողը կիրառում է երկրորդ լեզուն սխալներով,
- բ) երբ հաղորդակցվողը որոշ ժամանակ չի կիրառել երկրորդ լեզուն,
- գ) երբ հաղորդակցվողը բավականին լավ է տիրապետում երկրորդ լեզվին: (Քրիսթալ, 1987)

Տվյալ դեպքում մենք կվերլուծենք լեզվանցումների կիրառության երրորդ դեպքը, այն է՝ երբ ԱՄՆ-ում բնակվող հայ ազգի ներկայացուցիչները հավասարապես կամ գրեթե հավասարապես են տիրապետում անգլերենին: Կցանկանայինք նշել, որ սույն հոդվածում կներկայացնենք լեզվանցումների *նկարագրական* վերլուծություն: Հատկապես հետաքրքրություն է ներկայացնում հայ համայնքի երիտասարդ ներկայացուցիչների մոտ նկատվող լեզվանցումները: Վերջիններս մի քանի տարի առաջ տեղափոխվել են ԱՄՆ և այժմ

բավականին լավ տիրապետում են անգլերենին և իրենց հաղորդակցման մեծ մասը իրականացվում է անգլերեն լեզվով: Այնուամենայնիվ, տարաբնույթ հավաքույթների և զրույցների դեպքում հաղորդակցման մեծ մասը տեղի է ունենում հայերեն լեզվով: Հարկ է նշել, որ ի տարբերություն Հայաստանում տիրող լեզվական իրավիճակի, երբ հայերենը համարվում է չեզոք լեզու, իսկ անգլերենը՝ նշույթավորված, ԱՄՆ-ում հայ հանրություն երկու լեզուներն էլ չեզոք են և անցումը մեկ լեզվից մյուսը համարվում է սովորական երևույթ:

Ինչպես վկայում են մեր դիտարկումները, հայ ներկայացուցիչների հայերեն բանավոր խոսույթի հիմնական առանձնահատկություններից մեկը նախադասության սկզբում անգլերեն որևէ շաղկապի գործածումն է: Հարկ է նշել, որ տվյալ շաղկապները նրանք են, որոնք հաճախ գործածվում են ամերիկյան անգլերենի կրողների կողմից: Բերենք մի օրինակ միաբառ *intra-sentential* (միջասույթային) տեսակի լեզվանցումներից Տեխաս նահանգի համալսարանի ասպիրանտի բանավոր խոսույթից.

- Երեխեք, եկեք միացնենք այս երկու սեղանները իրար, *otherwise* չենք կարողանալու տեղադրենք բոլոր համակարգիչները:

Նշենք, որ անգլերեն *otherwise* շաղկապի գործածումը նախադասության սկզբում կատարվեց մեխանիկորեն: Տվյալ փաստը կարելի է թերևս բացատրել նրանով, որ *otherwise* շաղկապի հայերեն համարժեքը՝ *այլապես* թերևս քիչ գործածելի է, նույնիսկ Հայաստանում:

Սիաբառ լեզվանցման մեկ այլ տիպիկ դեպք կարելի է նկատել *actually* խոսույթային նշիչի հետ, որը, ի դեպ, երիտասարդ ամերիկացիների բանավոր խոսությունում առավել հաճախ գործածվող բառերից է: Նույնը կարելի է ասել ԱՄՆ-ի հայ ներկայացուցիչների վերաբերյալ: Սույն բառը՝ ի շնորհիվ իր յուրահատուկ խոսույթային գործառնությունների, որպես կանոն կիրառվում է ասույթի սկզբում և կարծեք թե նախանշում է մի նոր միտք տվյալ խոսություն: Նույնը տեղի է ունենում հայ ներկայացուցիչների բանավոր խոսություն: Բերենք մի քանի օրինակ քսաներեքամյա հայ երիտասարդի մի խոսույթից, որը շուրջ յոթ տարի բնակվում էր ԱՄՆ-ում.

- ... Չեմ կարծում նա գալու է եկեղեցի: *Actually*, շաբաթ-կիրակի օրերին նա գնում է Հյուստոն իր ծնողների մոտ: Այնպես որ հավանաբար չի գա: *Actually* նշիչը կարծեք թե հաստատում է նախորդ ասություն հնչեցված միտքը:

Բերենք օրինակ մեկ այլ հաղորդակցական իրավիճակից, որտեղ վերը նշված երիտասարդ աղջիկը նույնպես կիրառում է սույն հաղորդակցական նշիչը.

- ... Երեխեք, առավոտյան այնքան էլ ազատ չեմ, այնպես որ ոչինչ չեմ կարող խոստանալ... Actually, կարող եմ ժամը տասնմեկի դասը բաց թողնել և վերցնել աֆիշները:

Նկատենք, որ վերջին օրինակում actually նշիչը ձեռք է բերում այլ՝ հակադրական իմաստ, ինչը թերևս կարելի էր համեմատել ռուսերենի в противном случае խոսությամբ նշիչի հետ: Ի դեպ տվյալ ռուսերեն արտահայտությունը բավականին հաճախ գործածվում է հայերեն խոսություն Հայաստանի իսկ սահմաններում: Այսպիսով, միևնույն խոսությամբ նշիչը կարող է ձեռք բերել տարբեր հաղորդակցական իմաստներ և գործառնություն՝ կախված հաղորդակցական իրավիճակից:

ԱՄՆ-ի հայ համայնքի ներկայացուցիչների բանավոր խոսություն կարելի է նկատել միջասության (intersentential) լեզվացում: Դա սովորաբար տեղի է ունենում ոչ պաշտոնական ընկերական մթնոլորտում: Օրինակ հետևյալ հաղորդակցական իրավիճակում, երբ մեքենայի մեջ գտնվող երիտասարդ աղջիկը խնդրում է կանգնեցնել մեքենան, որպեսզի խանութից վերցնի լուսանկարները:

- ...Դե լավ, երեխեք, I'll be right back.

Այս տիպի ասությունը բավականին հաճախ են գործածվում լեզվի կրողների՝ այն է ամերիկացիների բանավոր խոսքում: Հայ հաղորդակցվողի կողմից մնան արտահայտությունների կիրառումը կարելի է թերևս բացատրել նրանով, որ այն բավականին համառոտ է և առողջաբանորեն սահուն, ինչը նպաստում է դրա կիրառությանը բանավոր խոսություն: Այնուամենայնիվ, մնան լեզվացումները հազվադեպ բնույթ են կրում:

ԱՄՆ-ի հայ համայնքներում տեղի ունեցող լեզվացումների մասին խոսելիս, հարկ է հիշատակել "I was like" արտահայտությունը, որը նշանակում է "ես ասացի": Մեր բազմաթիվ դիտարկումներից ելնելով, կարող ենք հավաստիորեն ասել, որ սույն արտահայտությունը ամենահաճախ գործածվող արտահայտությունն է երիտասարդ ամերիկացիների բանավոր խոսություն: Ուստի բոլորովին զարմանալի չէ, երբ միևնույն արտահայտությունը լսում ես հայ ազգի երիտասարդ ներկայացուցիչների խոսքում: Նշելի է նաև այն փաստը, որ սույն արտահայտությունը հատուկ է հատկապես *իզական* սեռի ներկայացուցիչների խոսության, օրինակ, ինչպես հետևյալ իրավիճակում, երբ երիտասարդ աղջիկը պատմում է մի խանութում իր հետ տեղի ունեցած միջադեպի մասին.

- ... Մի րոպեից վաճառողը վերադառնում և ասում է, որ կարող եմ վերցնել ևս երկու դիսկետ, եթե միանգամից վերցնեմ դիսկետների մի ամբողջ տուփ... I was like "Are you kidding?" Պատկերացնում "Ես: Եվ նա լրիվ լուրջ էր ասում:

I was like արտահայտության անմիջական ներմուծումը հայերեն խոսություն կարելի է բացատրել, քերես, տարբեր պատճառներով: Նախ, ինչպես արդեն նշեցինք, նրա գործառական բարձր հաճախականությամբ: Բացի այդ, այն առավել համառոտ է և առողաբանորեն սահուն, քան հայերեն համարժեքը: Ավելին, հաջորդող արտահայտությունը դարձյալ անգլերենով է, ինչն էլ ավելի է նպաստում անգլերենի անցմանը: Նշենք նաև, որ նման լեզվանցումը անգլերենին ոչ մի գործաբանական նպատակ չի հետապնդում և հատուկ ոճական երանգավորում չի կրում:

ԱՄՆ-ում հայ ազգի ներկայացուցիչների բանավոր խոսություն հաճախ հնչում են նաև ամերիկյան դարձվածային՝ իդիոմատիկ արտահայտությունները: Ի տարբերություն նշված դեպքերի, այսպիսի իրավիճակներում հայ հաղորդակցվողը հայտնվում է հուզական ոչ չեզոք պայմաններում, ինչպես, օրինակ, հետևյալ իրավիճակում, երբ մեքենայի վարորդը բացատրում է մեկ այլ մեքենայի վարորդին, ինչպես հասնել կոնկրետ վայրը.

... Գնա H 7 ճանապարհով, հետո դուրս արի և թեքվիր դեպի աջ: Այնտեղ խաչմերուկ կտեսնես, թեքվիր նորից դեպի աջ և ճանապարհով ուղիղ գնա. երբ հասնես բենզավառելիքի կայանը, թեքվիր դեպի ձախ և սպասիր մեզ այնտեղ.... Այո... Ոչ... Չախ... Այո: You are killing, man!

Լեզվանցման այս օրինակը վկայում է հաղորդակցողի՝ իր ընկերոջ հանդեպ դժգոհության արտահայտելու մասին: Նա կիրառում է "You are killing" ամերիկյան դարձվածը, թեև միևնույն խոսակցական արտահայտությունը առկա է հայերենում նույնպես(դե սպանեցիր էլի): Սակայն հաղորդակցողը անցնելով անգլերենին ցանկացել է ընդգծել իր վերաբերմունքն ընկերոջ նկատմամբ: Կարծում ենք, որ տվյալ լեզվանցումը անգլերենին կարելի է համարել նշույթավորված, քանզի այն ընդգծում է հաղորդակցողի անձնական վերաբերմունքը:

Ինչպես տեսնում ենք, լեզվանցումները անգլերենին հայերեն բանավոր խոսություն կարող են ստանձնել տարբեր ձևեր և կատարել տարբեր հանրալեզվաբանական գործառույթներ: Լեզվանցումները կարող են ունենալ տարբեր հանրալեզվաբանական և զուտ լեզվաբանական դրդապատճառներ: Ուստի կարելի քերես եզրակացնել, որ որոշ դեպքերում լեզվանցումները կարող են հանրության մեջ ծառայել որպես հանրալեզվաբանական գործիք:

Գրականության ցանկ

1. Crystal, D. The Cambridge Encyclopedia of Language. Cambridge University Press, 1987.
2. Skiba, R. Code Switching as a Countenance of Language Interference, the Internet TESL Journal, Vol. 3, No. 10, 1997
3. Milroy, L. Observing and Analyzing Natural Language: A Critical Account of Sociolinguistic Method. Blackwell Publishers: Oxford, 1987.
4. Scotton, C. Code Switching of Multilingual Communities. Georgetown University Press, 1987